Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի
2008 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 1/913Ա որոշմամբ

1. Տիպաբանություն

Այլընտրանքային փոխանցումների համակարգերի կիրառությամբ դրամական միջոցների ծագման իրական աղբյուրների քողարկման միջոցով փողերի լվացման սխեմա

1) Սխեմայի նկարագիրը

Այս գործարքներին, որպես կանոն, մասնակցում են արտասահմանում[1] գտնվող գրասենյակներ և/կամ անհատներ (այսուհետ՝ Կազմակերպիչ), ՀՀ տարածքում գործող բանկերում հաշիվներ ունեցող կազմակերպություններ[2] կամ ֆիզիկական անձինք: Գործարքները կատարվում են հետևյալ սխեմայով և քայլերի հաջորդականությամբ.

Կազմակերպիչն իր գործունեության երկրի տարածքում քաղաքացիներից և կազմակերպություններից ընդունում է գումարներ, որոնք կենտրոնացվում են Կազմակերպչի կամ նրա հետ կապված անձանց անունով բացված բանկային հաշիվներին: Հաջորդ քայլով, նշված միջոցները մեկ կամ մի քանի գումարով փոխանցվում են ՀՀ տարածքում գործող որևէ բանկ՝ այդ բանկում հաշիվ ունեցող որևէ (օֆշորային տարածքում գրանցված) կազմակերպության կամ ֆիզիկական անձի հաշվին: Ընդ որում, միջոցները կազմակերպության անվամբ փոխանցվելու դեպքում որպես նպատակ հաճախ նշվում է որևէ ապրանքի մատակարարում, ծառայության մատուցման, արժեթղթերի/ մուրհակների առուվաճառքի դիմաց վճարում, փոխառության տրամադրում/ մարում, իսկ ֆիզիկական անձանց անվամբ փոխանցվելու դեպքում՝ ֆինանսական օգնություն և այլն:


Այնուհետև, ստացված գումարները, որպես կանոն մեկ կամ մի քանի օրվա ընթացքում, շահառու իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից կանխիկ ելքագրվում են տվյալ անձի հաշվից կամ բաշխվում են նույն բանկում սպասարկվող այլ իրավաբանական կամ ֆիզիկական անձանց հաշիվներին, որից հետո կանխիկ ելքագրվում են վերջիններիս կողմից:

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերը նշված գումարների.

- Ծագման օրինականությունը հնարավոր չէ պարզել՝ համապատասխան տեղեկատվության բացակայության պատճառով, և
- Դրանք ստացող իրավաբանական կամ ֆիզիկական անձինք հաճախ իրենք չեն հանդիսանում այդ գումարների վերջնական շահառուն, այլ (ըստ Կազմակերպչից ստացված ցուցակի) դրանք իրենց հերթին բաշխում են վերջնական շահառու հանդիսացող անձանց:

[1] Ավելի հաճախ՝ Ռուսաստանի Դաշնությունում, ԱՄՆ-ում, հայկական գաղթօջախներ ունեցող այլ երկրներում:
[2] Ավելի հաճախ՝ օֆշորային տարածքներում գրանցված կազմակերպություններ:

2) Ստորև սխեմատիկորեն ներկայացվում են նկարագրված տեսակի գործառնությունները.



ա. Կազմակերպիչը Փոխանցողներ Ա, Բ, Գ-ից ընդունում է գումարներ,

բ. Հավաքագրված գումարները մուտքագրվում են Կազմակերպչի կամ նրա հետ կապված անձի բանկային հաշվին,

գ. Հաշվետիրոջ հանձնարարականով միջոցները ամբողջությամբ կամ մաս մաս փոխանցվում են ՀՀ տարածքում գործող որևէ բանկ՝ այդ բանկում հաշիվ ունեցող որևէ (օֆշորային տարածքում գրանցված) կազմակերպության կամ ֆիզիկական անձի հաշվին,

դ. Փոխանցված գումարները.

- կանխիկ ելքագրվում են տվյալ անձի հաշվից, կամ
- բաշխվում են նույն բանկում սպասարկվող այլ իրավաբանական կամ ֆիզիկական անձանց հաշիվներին, որից հետո կանխիկ ելքագրվում են վերջիններիս կողմից (մի դեպքում փոխանցվող գումար(ներ)ի վերջնական շահառուն Հաճախորդ Ա-ն է, իսկ երկրորդի դեպքում Հաճախորդ Ա-ն հանդիսանում է միջնորդ օղակ՝ ստացված գումար(ներ)ը վերջնական շահառուներ Ստացող Ա, Ստացող Բ և մյուսների միջև բաշխելու համար):

3) Եզրահանգում

Վերը նշված սխեմայով և քայլերի հաջորդականությամբ կատարվող գործարքներն իրենց մեջ կարող են պարունակել եկամուտների ծագման աղբյուրները, դրանց շարժը կամ իրական պատկանելությունը (վերջնական շահառուներին) թաքցնելու նպատակ:

Նման սխեմայով հատկորոշվող գործառնությունների ուսումնասիրության տեսանկյունից առանձնակի ուշադրության են ենթակա **<u>ֆինանսական հաստատության հաճախորդների կողմից արտերկրից միջին և խոշոր ծավալով դրամական միջոցների ստացման գործարքները</u>**:

2. Տիպաբանություն

Ֆիզիկական անձանց կողմից կատարվող դրամական փոխանցումների կիրառությամբ ապօրինի ձեռնարկատիրական գործունեության և հարկերից խուսափելու արդյունքում ձևավորված միջոցների շրջանառության և օրինականացման սխեմա


1) Սխեմայի նկարագիրը

Տվյալ սխեմայով իրականացվող գործարքները հիմնականում իրենց մեջ պարունակում են միջոցների հոսքի հետևյալ ուղղությունը՝ ֆիզիկական անձի կողմից միջոցների փոխանցում ոչ ռեզիդենտ իրավաբանական անձին: Միջոցների հոսքի այս ուղղությունը հիմնականում կապված է ներմուծման գործարքների հետ: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետություն ապրանքների ներկրմամբ զբաղվող կազմակերպությունը ներմուծված ապրանքները հայտարարագրում և մաքսազերծում է ոչ ամբողջ ծավալով, ինչը նաև նշանակում է, որ այդ ապրանքների չհայտարարագրված մասի իրացումը կատարվում է ստվերում (չի բացահայտվում կազմակերպության հաշվապահական հաշվառման և այլ փաստաթղթերում): Ապրանքների դիմաց վճարում կատարելու համար, ընկերությունը, չհայտարարագրված ապրանքների իրացումից գոյացած միջոցները շահագրգիռ ֆիզիկական անձի միջոցով (ֆիզիկական անձի անունից կամ նրա բանկային հաշվով) փոխանցում է այն կազմակերպությանը, որից ապրանքը ներկրվել էր: Որպես խոշորածավալ փոխանցումների փաստաթղթային հիմք ներկայացվում են փոխառության, արժեթղթերի առուվաճառքի ստանդարտ պայմանագրեր, կամ որպես նպատակ ուղղակիորեն նշվում է «պարտքի մարում», «պարտավորությունների փոխհաշվարկ» և այլն, կամ ներկայացվում են իրավաբանական անձանց անունով հաշիվ ապրանքագրեր:

Միևնույն սխեման դիտվում է նաև այն դեպքերում, երբ ապրանքների ներմուծմամբ զբաղվում է ֆիզիկական անձը: Ներմուծված ապրանքների մաքսազերծումը իրականացվում է այդ նպատակով ստեղծված «մասնագիտացված» (այսպես կոչված՝ «մեկօրյա կյանք ունեցող», «թուղթ վաճառող») կազմակերպությունների անունով, իսկ դրանց դիմաց վճարումը կատարվում է ՀՀ առևտրային բանկերում սպասարկվող հաշիվներով (կամ առանց հաշվի բացման՝ արագ փոխանցումների համակարգերով):

Վերը նկարագրված գործարքներն իրենցից ներկայացնում են ապրանքների ներմուծման հետ կապված ձեռնարկատիրական գործունեության ստվերային շրջանառության ֆինանսավորում և ուղղված են տնտեսվարող սուբյեկտների կողմից վճարման ենթակա ուղղակի և անուղղակի հարկերից խուսափմանը:

2) Ստորև սխեմատիկորեն ներկայացվում են նկարագրված տեսակի գործառնությունները.



ա. Ներմուծող կազմակերպությունը Մատակարարից գնում և Հայաստան է տեղափոխում ապրանքներ,

բ. Ներմուծվող ապրանքի մի մասը օրինական կերպով հայտարարագրվում և մաքսազերծվում է,

գ. Ներմուծվող ապրանքի մնացած մասը ներմուծվում է «զարտուղի» ճանապարհներով և չի հայտարարագրվում/ մաքսազերծվում,

դ. Օրինական կերպով հայտարարագրված և մաքսազերծված ապրանքների վաճառքից գոյացած գումարը կազմակերպության բանկային հաշիվներով օրինական կերպով փոխանցվում է մատակարարին՝ ներկայացնելով վճարման օրինաչափությունը հիմնավորող փաստաթղթերը,

ե. Չհայտարարագրված/չմաքսազերծված ապրանքների վաճառքից գոյացած գումարը շահագրգիռ անձանց կողմից հաշվի բացմամբ կամ առանց հաշվի բացման (որոշ դեպքերում՝ արագ փոխանցումների համակարգերով) փոխանցվում է մատակարարին՝ որպես վճարման փաստաթղթային հիմք ներկայացնելով փոխառության, արժեթղթերի առուվաճառքի ստանդարտ պայմանագրեր, կամ որպես նպատակ ուղղակիորեն նշվում է «պարտքի մարում», «պարտավորությունների փոխհաշվարկ» և այլն, կամ ներկայացվում են իրավաբանական անձանց անունով հաշիվ ապրանքագրեր:

3) Եզրահանգում

Վերը նկարագրված սխեմայով և քայլերի հաջորդականությամբ կատարվող գործարքներն իրենց մեջ կարող են պարունակել եկամուտների ծագման աղբյուրները, դրանց շարժը կամ իրական պատկանելությունը (վերջնական շահառուներին)

թաքցնելու, ինչպես նաև հարկային պարտավորություններից խուսափելու, տնտեսական գործունեության իրական ծավալները թաքցնելու նպատակ:

Նման սխեմայով հատկորոշվող գործառնությունների ուսումնասիրության տեսանկյունից առանձնակի ուշադրության են ենթակա **ֆինանսական հաստատության միջոցով իրականացվող այն փոխանցումները, որոնց նախաձեռնողները հանդիսանում են ֆիզիկական, իսկ շահառուները՝ իրավաբանական անձինք, ուշադրություն դարձնելով շահառու կազմակերպության ռեզիդենտությանը, քանզի դա կարող է հուշել թե արդյոք վճարումը կատարվում է ներմուծված ապրանքների դիմաց, և ճշտելով նախաձեռնող ֆիզիկական անձի առնչությունը որևէ գործարար բնագավառի հետ:**

3. Տիպաբանություն

Արտարժույթի առուվաճառքի գործարքների կիրառությամբ դրամական միջոցների ծագման իրական աղբյուրների և փաստացի շարժի ուղղության քողարկման միջոցով փողերի լվացման սխեմա

Նշված տեսակի սխեմայի գործողության մեխանիզմը կայանում է հետևյալում. ֆինանսական հաստատությունը (այդ թվում՝ արտարժույթի առուվաճառքի գործունեություն իրականացնող անձը) երկու և/կամ ավելի արժույթների առուվաճառքի մի շարք գործարքների միջոցով.

- իր հաճախորդ մի տնտեսվարող սուբյեկտի հետ գործարքների միջոցով ստանում է եկամուտներ, և
- մեկ այլ սուբյեկտի հետ գործարքների միջոցով կրում է վնասներ՝ այդպիսով ապահովելով առաջինի վնասներով ձևավորված միջոցների փոխանցումը երկրորդին: Գործարքների արդյունքում տեղի է ունենում ֆինանսական միջոցների հոսք մի տնտեսվարող սուբյեկտից մյուսին՝ թաքցնելով դրանց ծագման իրական աղբյուրը և շարժման փաստացի ուղղությունը:

1) Սխեմայի նկարագիրը

ա. Ֆինանսական հաստատությունն իր հաճախորդ տնտեսվարող սուբյեկտի հետ արտարժույթի առուվաճառքի գործարքների միջոցով ստանում է եկամուտներ

Արտարժույթի առուվաճառքի պոտենցիալ կասկածելի այս գործառնությունները կատարվում են հետևյալ սխեմայով.

1) Հաստատությունն իր Հաճախորդ Ա-ին վաճառում է, օրինակ, 1.000.000 եվրո՝ գնելով 1.500.000 ԱՄՆ դոլար (դիցուք՝ 1.500 փոխարժեքով),

2) Հաջորդ քայլով հաստատությունը Հաճախորդ Ա-ի հետ կատարում է նույն ծավալով եվրոի հակադարձ գործարք՝ գնելով 1.000.000 եվրո և դրա դիմաց վճարելով 1.450.000 ԱՄՆ դոլար (դիցուք՝ 1.450 փոխարժեքով):

Արդյունքում, ֆինանսական հաստատությունն իր կողմից վաճառված եվրոն հետ գնելու համար Հաճախորդ Ա-ին վճարում է ավելի քիչ ԱՄՆ դոլար, քան ստացել էր (առքի ու վաճառքի փոխարժեքների տարբերությամբ պայմանավորված չափով) և ստանում է որոշակի եկամուտ (դիտարկվող դեպքում՝ 50.000 ԱՄՆ դոլար): Փաստորեն, նշված գործարքների արդյունքում Հաճախորդ Ա-ն ֆինանսական հաստատությանը «զիջում» է որոշակի գումար՝ ի հաշիվ իր վնասների:

բ. Ֆինանսական հաստատությունն իր հաճախորդ տնտեսվարող սուբյեկտի հետ արտարժույթի առուվաճառքի գործարքների միջոցով կրում է վնասներ

Այս քայլով կրկնվում են նախորդ կետում նշված գործողությունները, սակայն՝ արդեն հակառակ արդյունքով: Մասնավորապես.

Հաստատությունն իր Հաճախորդ Բ-ին վաճառում է, օրինակ, 1.000.000 եվրո՝ գնելով 1.450.000 ԱՄՆ դոլար (դիցուք՝ 1.450 փոխարժեքով),

Հաջորդ քայլով հաստատությունը Հաճախորդ Բ-ի հետ կատարում է նույն ծավալով եվրոի հակադարձ գործարք՝ գնելով 1.000.000 եվրո և դրա դիմաց վճարելով 1.500.000 ԱՄՆ դոլար (դիցուք՝ 1.500 փոխարժեքով):


Արդյունքում, ֆինանսական հաստատությունն իր կողմից վաճառված եվրոն հետ գնելու համար Հաճախորդ Բ-ին վճարում է ավելի շատ ԱՄՆ դոլար, քան ստացել էր (առքի ու վաճառքի փոխարժեքների տարբերությամբ պայմանավորված չափով) և կրում է որոշակի վնաս (դիտարկվող դեպքում՝ 50.000 ԱՄՆ դոլար): Փաստորեն, նշված գործարքների արդյունքում ֆինանսական հաստատությունը Հաճախորդ Բ-ին «զիջում» է որոշակի գումար՝ ի հաշիվ իր վնասների:

Վերը նկարագրված գործարքների արդյունքում Հաճախորդ Ա-ի վնասների հաշվին ձևավորված միջոցները մուտքագրվում են Հաճախորդ Բ-ի հաշվին՝ թաքցնելով այդ միջոցների ծագման իրական աղբյուրները և շարժման փաստացի ուղղությունը, ինչի դիմաց ֆինանսական հաստատությունը, որպես կանոն, ստանում է «պարգևավճար»՝ արտարժույթի առուվաճառքի գործառնությունների դիմաց գանձվող միջնորդավճարների և/կամ գնվող/վաճառվող արժույթների փոխարժեքների տարբերությամբ պայմանավորված եկամտի տեսքով:

Ընդ որում, որպես կատարված գործարքների իրավաչափությունն ապացուցող հանգամանք, ֆինանսական հաստատությունը կարող է վերոհիշյալ գործարքները հնարավոր երրորդ կողմին ներկայացնել/ մեկնաբանել հետևյալ զուգադրությամբ՝ «ա1-բ2» և «ա2-բ1» (ըստ վերը ներկայացված կետերի համարակալման): Այսինքն՝ հաստատությունը կարող է պնդել, որ «ա1» քայլով Հաճախորդ Ա-ից 1.500 փոխարժեքով գնված ԱՄՆ դոլարը «բ2» քայլով նույն փոխարժեքով վաճառել է Հաճախորդ Բ-ին, և «ա2» քայլով Հաճախորդ Ա-ից 1.450 փոխարժեքով գնված եվրոն Բ1 քայլով նույն փոխարժեքով «բ1» քայլով վաճառել է Հաճախորդ Բ-ին, երկու դեպքում էլ ստանալով եկամուտ, դիտարկվող դեպքում՝ արտարժույթի առուվաճառքի գործառնությունների դիմաց գանձվող միջնորդավճարների տեսքով:

Ինչպես «ա», այնպես էլ «բ» կետում նկարագրված գործառնությունները կարող են կատարվել ոչ թե երկու, այլ երեք, չորս կամ ավելի մեծ թվով արժույթների «շղթայական» փոխարկումների միջոցով, ինչից այդ գործարքների կատարման տրամաբանությունն ու նպատակը չի փոխվում: Նշենք նաև, որ արժույթի փոխարկման գործարքների որևէ համախումբ «շղթայական» համարելու համար գործարքների՝ միմյանց հաջորդելու ստանդարտ կամ «լավագույն» ժամանակահատված գոյություն չունի. վերջինս կարող է տատանվել մեկից մինչև մի քանի օր, իսկ որոշ դեպքերում նաև՝ ավելի երկար միջակայքում: Նմանատիպ գործարքներ դիտարկելիս կարևորը այս կամ այն հաճախորդի հետ բանկի փոխհարաբերությունների ամբողջական եկամտաբերության (կամ՝ վնասաբերության) ուսումնասիրությունն է, այդ թվում նաև՝ հաճախորդների տվյալ խմբի համար սահմանված պայմանների նույնականությունը (կամ՝ դրանց էական շեղումները):

2) Ստորև սխեմատիկորեն ներկայացվում են նկարագրված տեսակի գործառնությունները.



ա. «Վատ ֆինանսական հաստատություն» ՓԲԸ-ն Հաճախորդ Ա-ի հետ կնքված արտարժույթի առուվաճառքի նույն ծավալով երկու հակադարձ գործարքի արդյունքում ստանում է զուտ եկամուտ (օրինակ՝ վաճառում է եվրո և գնում ԱՄՆ դոլար 1.500 փոխարժեքով, որից հետո գնում է եվրո և վաճառում ԱՄՆ դոլար՝ 1.450 փոխարժեքով),

բ. «Վատ ֆինանսական հաստատություն» ՓԲԸ-ն Հաճախորդ Բ-ի հետ կնքված արտարժույթի առուվաճառքի նույն ծավալով երկու հակադարձ գործարքի արդյունքում կրում է զուտ վնաս (օրինակ՝ վաճառում է եվրո և գնում ԱՄՆ դոլար 1.450 փոխարժեքով, որից հետո գնում է եվրո և վաճառում ԱՄՆ դոլար՝ 1.500 փոխարժեքով),

գ. Արդյունքում, «Վատ ֆինանսական հաստատություն» ՓԲԸ-ն ապահովում է Հաճախորդ Ա-ի վնասներով ձևավորված միջոցների փոխանցումը Հաճախորդ Բ-ին:

3) Եզրահանգում

Վերը նկարագրված սխեմայով և քայլերի հաջորդականությամբ կատարվող գործարքներն իրենց մեջ կարող են պարունակել եկամուտների ծագման աղբյուրները, դրանց շարժը կամ իրական պատկանելությունը (վերջնական շահառուներին) թաքցնելու նպատակ:

Նման սխեմայով հատկորոշվող գործառնությունների ուսումնասիրության տեսանկյունից առանձնակի ուշադրության են ենթակա **<u>ֆինանսական հաստատության կողմից իրականացվող արտարժույթի առուվաճառքի գործառնությունները</u>**:

4. Տիպաբանություն

Մուրհակների/ արժեթղթերի առուվաճառքի գործարքների կիրառությամբ դրամական միջոցների ծագման իրական աղբյուրների և փաստացի շարժի ուղղության քողարկման միջոցով փողերի լվացման սխեմա

Դիտարկվող տեսակի գործառնությունների միջոցով ապահովվում է բանկի հաճախորդների միջև դրամական միջոցների փաստացի փոխանցումը՝ քողարկելով (խեղաթյուրելով) գործարքների վճարման միջոց հանդիսացող դրամական միջոցների ծագման աղբյուրը և փաստացի շարժը կամ իրական պատկանելությունը:


1) Սխեմայի նկարագիրը

Բանկը որևէ կազմակերպությունից (դիցուք՝ Ա կազմակերպություն) ձեռք է բերում մուրհակներ/ արժեթղթեր, հաճախ՝ թողարկված ոչ առաջնակարգ ընկերությունների, այդ թվում՝ նաև բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների կողմից: Ձեռք բերված մուրհակները/ արժեթղթերը նույն օրը կամ հաջորդող կարճ ժամանակահատվածի ընթացքում բանկի կողմից վաճառվում են մեկ այլ կազմակերպության (դիցուք՝ Բ կազմակերպություն): Արդյունքում, Բ կազմակերպությունը վճարում, իսկ Ա կազմակերպությունը փաստացիորեն ստանում է մուրհակների/ արժեթղթերի առուվաճառքի գումարի չափով դրամական միջոցներ, սակայն այդ միջոցների փոխանցումը նշված գործարքներին մասնակից կազմակերպություններից յուրաքանչյուրի հաշվետվություններում արտացոլվում է որպես մեկ առանձին գործարք բանկի հետ, իսկ բանկի հաշվետվություններում՝ որպես երկու, միմյանց հետ որևէ առնչություն չունեցող գործարք երկու տարբեր տնտեսվարող սուբյեկտների հետ:

Գործարքներին մասնակից Ա և Բ կազմակերպությունների համար դրանց մասնակցության նպատակը գործարքների վճարման միջոց հանդիսացող դրամական միջոցների շարժը կամ իրական պատկանելությունը թաքցնելը/ խեղաթյուրելն է: Իր հերթին, բանկը նշված դրամական միջոցների շարժն ապահովող միջնորդ օղակի ծառայությունները մատուցելու դիմաց ստանում է եկամուտ՝ արժեթղթերի առքի և վաճառքի գումարների տարբերության չափով:

Համանման գործարքներ կարող են կատարվել նաև մուրհակների/արժեթղթերի առքի համար անհրաժեշտ միջոցները ձևավորելու նպատակով գնորդի կարճաժամկետ վարկավորման միջոցով:

2) Ստորև սխեմատիկորեն ներկայացվում են նկարագրված տեսակի գործառնությունները.



ա. «Վատ բանկ» ՓԲԸ-ն օտարերկրյա բանկի հաճախորդ Կազմակերպություն Ա-ից ձեռք է բերում տարբեր ընկերությունների մուրհակներ/ արժեթղթեր,

բ. Ձեռք բերված մուրհակները/ արժեթղթերը նույն օրը կամ հաջորդող կարճ ժամանակահատվածում վաճառվում են նույն կամ որևէ այլ օտարերկրյա բանկում սպասարկվող մեկ այլ՝ Կազմակերպություն Բ-ին:

3) Եզրահանգում

Վերը նկարագրված սխեմաներով և քայլերի հաջորդականությամբ կատարվող գործարքներն իրենց մեջ կարող են պարունակել եկամուտների ծագման աղբյուրները, դրանց շարժը կամ իրական պատկանելությունը (վերջնական շահառուներին) թաքցնելու նպատակ:

Նման սխեմայով հատկորոշվող գործառնությունների ուսումնասիրության տեսանկյունից առանձնակի ուշադրության են ենթակա **<u>ֆինանսական հաստատության կողմից իրականացվող մուրհակների/ արժեթղթերի առուվաճառքի գործառնությունները</u>**:

5. Տիպաբանություն

Հաճախորդներին փակ ցիկլով վարկավորելու կիրառությամբ դրամական միջոցների ծագման իրական աղբյուրների քողարկման միջոցով փողերի լվացման սխեմա


1) Սխեմայի նկարագիրը

Այս տեսակի սխեմաների գործողության մեխանիզմը կայանում է նրանում, որ բանկը իր հաճախորդների համար ձևավորում է հաշիվների շրջանառության (այդ թվում՝ վարկային) պատմություն, որը հետագայում հաճախորդի կողմից կարող է օգտագործվել իր կողմից շրջանառող միջոցների օրինականության հավաստման նպատակով:

Մասնավորապես, բանկն իր որևէ հաճախորդին տրամադրում է վարկ (կամ՝ օվերդրաֆթ, հաշվի վարկավորում): Նշված վարկային միջոցները որոշակի կարճ ժամանակահատվածի ընթացքում (որպես կանոն՝ մեկ կամ մի քանի օրվա ընթացքում) բանկում սպասարկվող մի քանի այլ հաճախորդների հաջորդաբար փոխանցվելուց հետո նորից մուտքագրվում են վարկը ստացած հաճախորդի հաշվին և ուղղվում ստացված վարկի մարմանը:

Հատկանշական է այն հանգամանքը, որ փոխանցումների միջանկյալ օղակներում հայտնված հաճախորդների հաշիվների մնացորդները թե միջոցները մուտքագրելուց առաջ, թե միջոցները ելքագրելուց հետո, որպես կանոն, զրոյական են կամ չնչին մեծություն ունեն: Այսպիսով, տեղի է ունենում գործարքների շարք, որի արդյունքում, օրինակ, շղթայի մասնակից հաճախորդները կարող են պնդել (բանկից ստանալ հավաստում առ այն), որ իրենց հաշվին տվյալ օրվա դրությամբ, եղել է որոշակի մնացորդ, կամ՝ որ իրենց կողմից կատարվել են որոշակի վճարումներ որևէ պայմանագրի/պարտավորության կատարման դիմաց: Նմանատիպ գործարքները հաճախ կիրառվում են այսպես կոչված «ԱԱՀ-ի կառուսելի» սխեմայով փողերի լվացման դեպքում:

2) Ստորև սխեմատիկորեն ներկայացվում են նկարագրված տեսակի գործառնությունները.



ա. Բանկն իր հաճախորդին տրամադրում է վարկ (կամ՝ օվերդրաֆթ, հաշվի վարկավորում),

բ. Վարկային միջոցները որոշակի կարճ ժամանակահատվածի ընթացքում բանկում սպասարկվող մի քանի կազմակերպությունների հաջորդաբար փոխանցվելուց հետո նորից մուտքագրվում են վարկը ստացած կազմակերպության հաշվին,

գ. Վարկառուի «հետ ստացած» միջոցներն ուղղվում են վարկի և դրանց գծով հաշվեգրված տոկոսագումարների մարմանը:

3) Եզրահանգում

Վերը նշված սխեմայով և քայլերի հաջորդականությամբ կատարվող գործարքներն իրենց մեջ կարող են պարունակել եկամուտների ծագման աղբյուրները, դրանց շարժը կամ իրական պատկանելությունը (վերջնական շահառուներին) թաքցնելու նպատակ:

Նման սխեմայով հատկորոշվող գործառնությունների ուսումնասիրության տեսանկյունից առանձնակի ուշադրության են ենթակա **<u>ֆինանսական հաստատության կողմից իրականացվող վարկավորման գործառնությունները, հատկապես՝ ոչ ռեզիդենտ (օֆշորային տարածքներում գրանցված) ընկերությունների մասով</u>**:

6. Տիպաբանություն

Հաճախորդներից ներգրավված միջոցների հաշվին վարկավորման կիրառությամբ դրամական միջոցների ծագման իրական աղբյուրների քողարկման միջոցով փողերի լվացման սխեմա

1) Սխեմայի նկարագիրը

Այս սխեմայի գործողության մեխանիզմը կայանում է նրանում, որ հաճախորդի կողմից փաստացիորեն տնօրինվող և անհայտ ծագմամբ դրամական միջոցները մեկ կամ մի քանի գործարքով ներարկվում են բանկային համակարգ, որից հետո այդ միջոցների գրավադրմամբ տրամադրվում են վարկեր՝ խնդրո առարկա միջոցների ծագման օրինականությունը երրորդ կողմի մոտ հավաստելու նպատակով:

Այսպես, տեղական բանկի հաճախորդի հաշվին կանխիկ կամ անկանխիկ (արտերկրից փոխանցումների միջոցով) ձևավորվում են միջոցներ, որոնք բանկում թողնվում են հաճախորդի հաշվի մնացորդի կամ ժամկետային ավանդի տեսքով: Որպես միջոցների ծագման օրինականությունը հավաստող փաստաթուղթ կարող են ներկայացվել անշարժ գույքի առուվաճառքի, փոխառության, ֆինանսական օգնության և այլ պայմանագրեր: Հաջորդ քայլով, նշված հաշվի մնացորդի կամ ժամկետային ավանդի ապահովությամբ բանկի կողմից տրամադրվում են վարկեր, որոնք տնօրինվում են ըստ հաճախորդի հանձնարարականների, որպես կանոն, փոխանցվելով արտերկիր (որոշ դեպքերում՝ կանխիկ ելքագրվելով):


Նույն տրամաբանությամբ և հաջորդականությամբ գործարքներ կարող են կատարվել միջբանկային գործառնությունների տեսքով, այսինքն՝ երբ արտասահմանյան բանկը տեղական բանկում ձևավորում է «լորո» թղթակցային հաշվի մնացորդ (ներդնում է ժամկետային ավանդ), որի ապահովությամբ տեղական բանկի հաճախորդ(ներ)ին տրամադրվում են վարկեր և տնօրինվում են վերջիններիս կողմից, որպես կանոն, փոխանցվելով արտերկիր: Ընդ որում, ըստ նշված գործարքների տրամաբանության, տեղական բանկում «լորո» թղթակցային հաշվի մնացորդի (ներդրված ժամկետային ավանդի) գրավադրման փաստը որևէ կերպ չի արտացոլվում արտասահմանյան բանկի ֆինանսական և այլ հաշվետվություններում:

Վերը նկարագրված երկու տարբերակի դեպքում էլ տրամադրված վարկերը որոշ ժամանակ անց մարվում են հաճախորդի հաշվի մնացորդի (ներգրավված ժամկետային ավանդի) հաշվին:

Վերոհիշյալ սխեմաներով իրականացվող գործարքների արդյունքում.

- Տեղական բանկի հաճախորդը երրորդ կողմի, օրինակ՝ օտարերկրյա պետության վերահսկողական մարմինների մոտ հիմնավորում է իր կողմից տնօրինվող միջոցների օրինականությունը՝ դրանք ցույց տալով որպես հայկական բանկից ստացված վարկային միջոցներ, շատ դեպքերում օգտվելով վարկային միջոցներով ֆինանսավորվող գործառնությունների համար նախատեսված արտոնություններից, և
- Արտասահմանյան բանկը լուծում է իր հաճախորդների անուղղակի վարկավորման և/կամ նախկինում ձևավորված անորակ ակտիվների վերաֆինանսավորման/ վերաձևակերպման հետ կապված խնդիրներ:

2) Ստորև սխեմատիկորեն ներկայացվում են նկարագրված տեսակի գործառնությունները.



ա. Բանկի հաճախորդի կողմից կանխիկ կամ անկանխիկ (արտերկրից փոխանցումների միջոցով) ձևավորվում են միջոցներ՝ հաշվի մնացորդի կամ ժամկետային ավանդի տեսքով,

բ. Հաշվի մնացորդի կամ ժամկետային ավանդի գրավադրմամբ տրամադրվում են վարկեր,

գ. Վարկային միջոցները տնօրինվում են ըստ հաճախորդի հանձնարարականների, որպես կանոն, փոխանցվելով արտերկիր (որոշ դեպքերում՝ կանխիկ ելքագրվելով),

դ. Տրամադրված վարկերը որոշ ժամանակ անց հաճախորդի հաշվի մնացորդի (ներգրավված ժամկետային ավանդի) հաշվին մարվում են:

3) Եզրահանգում

Վերը նշված սխեմայով և քայլերի հաջորդականությամբ կատարվող գործարքներն իրենց մեջ կարող են պարունակել եկամուտների ծագման աղբյուրները, դրանց շարժը կամ իրական պատկանելությունը (վերջնական շահառուներին) թաքցնելու նպատակ:

Նման սխեմայով հատկորոշվող գործառնությունների ուսումնասիրության տեսանկյունից առանձնակի ուշադրության են ենթակա **<u>ֆինանսական հաստատության կողմից իրականացվող ավանդների ներգրավման և վարկավորման, այդ թվում՝ դրամական միջոցների և այլ բարձր իրացվելի ակտիվների ապահովվածությամբ վարկերի տրամադրման գործառնությունները</u>**:

7. Տիպաբանություն

Կեղծ բանկային (վարկային) քարտերի միջոցով փողերի լվացման սխեմա

1) **Կիրառելիության շրջանակը**

Սույն տիպաբանությամբ ներկայացվող գործարքների սխեման կարող է վերաբերել հաշվետվություն տրամադրող անձ հանդիսացող բանկերին:

2) **Սխեմայի նկարագիրը**

Ստորև ներկայացված տիպաբանությամբ բնութագրվող գործարքները, որպես կանոն, իրականացվում են արտասահմանյան բանկերի հաճախորդների բանկային տվյալների ապօրինի օգտագործմամբ ստեղծված կեղծ բանկային (վարկային) քարտերի կիրառմամբ: Գործարքները կատարվում են քայլերի հետևյալ հաջորդականությամբ.

ա. Առևտրային գործունեությամբ զբաղվող իրավաբանական անձի / անհատ ձեռնարկատիրոջ առևտրի սպասարկման կետում տեղադրվում է վերջնասարք (POS-տերմինալ)՝ վաճառվող ապրանքների դիմաց անկանխիկ վճարումներ կատարելու նպատակով.


բ. Արտասահմանյան բանկերի հաճախորդների բանկային տվյալների ապօրինի օգտագործմամբ ստեղծված կեղծ բանկային (վարկային) քարտերի միջոցով մեկ կամ մի քանի հաճախորդների կողմից տվյալ առևտրի սպասարկման կետում կատարվում են վճարումներ, որոշ դեպքերում՝ փաստացի գնված, իսկ որոշ դեպքերում նաև՝ իբրև թե գնված ապրանքների (կամ մատուցված ծառայությունների) դիմաց.

գ. Կատարված գործարքների արդյունքում ձևավորված դրամական միջոցները կուտակվում են տվյալ POS-տերմինալի սպասարկման նպատակով իրավաբանական անձի / անհատ ձեռնարկատիրոջ անվամբ բացված բանկային հաշվեհամարին.

դ. Հետագայում հիշյալ հաշվեհամարին կուտակված միջոցները, որպես կանոն, ուղղվում են տվյալ իրավաբանական անձի/ անհատ ձեռնարկատիրոջ ընթացիկ գործունեության ապահովմանը՝ համապատասխան փոխանցումների կամ կանխիկացման միջոցով:

3) **Գործառնությունների սխեմատիկ նկարագիրը**

Ներկայացված գործառնությունների սխեմատիկ պատկերը հետևյալն է.



Կուտակված դրամական միջոցների փոխանցում/ կանխիկ ելքագրում

4) **Եզրահանգում**

ա. Ներկայացված սխեմայով և քայլերի հաջորդականությամբ կատարվող գործարքներն իրենց մեջ պարունակում են հանցավոր ճանապարհով (քարտային

զեղծարարությունների միջոցով) ստացված եկամուտների ծագման աղբյուրները, դրանց շարժը կամ իրական պատկանելությունը (վերջնական շահառուներին) թաքցնելու նպատակ:

բ. Կեղծ բանկային (վարկային) քարտերով կատարվող գործարքների համար հատկանշական են հետևյալ բնութագրիչները.

1) Գործարքները կատարելու փորձեր են արվում բավականին կարճ, ոչ ողջամիտ ժամանակահատվածում (որպես կանոն՝ մի քանի րոպեների տարբերությամբ).

2) Միմյանց հաջորդում են միևնույն քարտով կատարված մի շարք գործարքներ, որոնց մի մասը կարող են լինել գործարք կատարելու փորձեր (քարտի վրա առկա հասանելի գումարի ճշտման նպատակով).

3) Իրար հաջորդող բոլոր գործարքները հիմնականում կամ միևնույն գումարի են կամ համաչափորեն նվազող.

4) Գործարքները հաճախ կատարվում են «կլոր» գումարներով (օրինակ՝ 300.000 ՀՀ դրամ, 100.000 ՀՀ դրամ, 50.000 ՀՀ դրամ և այլն).

5) Նույն վերջնասարքով կատարվում են վերը թվարկված հատկանիշներով բնութագրվող մի շարք գործարքներ՝ մեկ կամ մի քանի կեղծ քարտերով:

գ. Սահմանված սխեմայով հատկորոշվող գործարքներին առնչվող ՓԼ/ԱՖ ռիսկերը կանխարգելելու նպատակով անհրաժեշտ է ձեռնարկել հետևյալ միջոցառումները.

1) առանձնակի ուշադրություն դարձնել միևնույն քարտով և միևնույն առևտրի սպասարկման կետում կատարված միմյանց հաջորդող բազմաթիվ գործարքներին.

2) կախված սպասարկման կետի գործունեության տեսակից՝ ուշադրություն դարձնել նաև փաստացի կատարված գործարքի կամ գործարքի փորձ(եր)ի գումարների չափերին, դրանք համեմատելով այդ սպասարկման կետում սովորաբար կատարվող գործարքների գումարի չափերի հետ:

8. Տիպաբանություն

Անշարժ գույքի առքուվաճառքի միջոցով կիրառվող փողերի լվացման սխեմա

1) **Կիրառելիության շրջանակը**

Սույն տիպաբանությամբ[3] ներկայացվող գործարքների սխեման կարող է վերաբերել հաշվետվություն տրամադրող հետևյալ անձանց՝

ա. բանկեր, վարկային կազմակերպություններ, ապահովագրական ընկերություններ.

բ. անշարժ գույքի գրանցման պետական միասնական կադաստր վարող մարմին.

գ. ռիելտորական գործունեություն իրականացնող անձինք.

դ. նոտարներ.


ե. հաշվապահական և աուդիտորական ծառայություններ մատուցող անձինք.

զ. փաստաբաններ, իրավաբանական ծառայություններ մատուցող անհատ ձեռնարկատերեր և իրավաբանական անձինք:

2) Սխեմայի նկարագիրը

Ստորև ներկայացված տիպաբանությամբ բնութագրվող գործարքները, որպես կանոն, կատարվում են քայլերի հետևյալ հաջորդականությամբ. «Ա» անձը, ով հանցավոր ճանապարհով ստացել է, օրինակ, 1.000 միավոր եկամուտ, համաձայնության է գալիս անշարժ գույք վաճառող «Բ» անձի հետ՝ վերջինիս առաջարկելով գնել նրա գույքը 1.000 միավորով, սակայն առուվաճառքի պայմանագրի մեջ որպես գույքի արժեք նշել 500 միավոր: Այնուհետև, «Ա»-ն գնված գույքը նույն 1.000 միավորի (կամ դրան գերազանցող գումարի) դիմաց վաճառում է «Գ» անձին, և արդյունքում ցույց է տալիս, որ իրականում հանցավոր գործունեության արդյունք հանդիսացող գումարը առաջացել է անշարժ գույքի վաճառքի շնորհիվ: Այս դեպքում հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների ծագումը հետագայում քողարկելու նպատակով հնարավոր է, որ գնորդ-վաճառողի դերում հանդես գա օֆշորային ընկերություն:

3) Գործառնությունների սխեմատիկ նկարագիրը



[3] Տիպաբանությունը մշակվել է՝ հիմք ընդունելով ՖԱԹՖ-ի կողմից 1997-1998թթ. հրապարակված տիպաբանությունները www.fatf-gafi.org;

4) **Եզրահանգում**

ա. Վերը սահմանված սխեմայով և քայլերի հաջորդականությամբ կատարվող գործարքներն իրենց մեջ կարող են պարունակել եկամուտների ծագման աղբյուրները, դրանց շարժը կամ իրական պատկանելությունը (վերջնական շահառուներին) թաքցնելու նպատակ: Այս սխեման բնութագրող չափանիշներն են՝

1) գործարքի փաստաթղթում նշված գնի անհամապատասխանությունը տվյալ գույքի իրական (շուկայական) գնահատված արժեքի հետ,

2) գույքի գնման և վաճառքի գործարքների միջև համեմատաբար կարճ ժամանակահատվածը (օրինակ՝ մեկ կամ մի քանի շաբաթ/ ամիս),

3) գույքի սկզբնական վաճառողի կողմից վաճառքին հաջորդող ժամանակահատվածում վաճառքի գումարը էապես գերազանցող կանխիկ կամ անկանխիկ գործարքների իրականացումը,

4) գործարքի գումարի միջանկյալ և վերջնական վճարողների եկամտի ծագման աղբյուրի ոչ հստակ/ կասկածելի լինելը,

5) ռիսկային (օֆշորային) գոտում գտնվող ընկերությունների ներգրավվածություն:

բ. Նշված սխեմայով հատկորոշվող գործարքներին առնչվող ՓԼ/ԱՖ ռիսկերը կանխարգելելու նպատակով անհրաժեշտ է ձեռնարկել հետևյալ միջոցառումները՝

1) հաճախորդի հավելյալ ուսումնասիրություն,

2) գործարքի հիմք հանդիսացող փաստաթղթերի հավելյալ ուսումնասիրություն,

3) գործարքի կատարման օրինականության ստուգում,

4) տեղեկատվության արդյունավետ փոխանակում իրավասու պետական մարմինների և այլ կազմակերպությունների հետ:

9. Տիպաբանություն

Ապահովագրական գործառնությունների միջոցով փողերի լվացման սխեմա

1) Կիրառելիության շրջանակը

Սույն տիպաբանությամբ[4] ներկայացվող գործարքների սխեման կարող է վերաբերել հաշվետվություն տրամադրող հետևյալ անձանց՝

ա. բանկեր,

բ. ապահովագրական ընկերություններ,

գ. ապահովագրական միջնորդային գործունեություն իրականացնող անձինք:

2) Սխեմայի նկարագիրը


Ապահովագրական գործունեությունը գրավիչ գործիք է հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման համար, քանի որ ապահովագրական պոլիսների զգալի մասը փաստացի վաճառվում է բրոքերների և գործակալների միջոցով և հաճախ միայն այս միջնորդներն են անմիջական շփում ունենում հաճախորդների հետ:

Ապահովագրական ընկերությունների ներգրավմամբ փողերի լվացման սխեման կարող է իրականացվել ինչպես հաճախորդների կողմից (կամ միջնորդ կազմակերպության օգտագործմամբ) տվյալների կեղծմամբ ապահովագրական դեպք ցույց տալու, այնպես էլ ապահովագրական պոլիսներից թույլատրելի ժամկետում հրաժարվելու միջոցով: Ստորև ներկայացված տիպաբանությամբ բնութագրվող գործարքները, որպես կանոն, կատարվում են քայլերի հետևյալ հնարավոր սցենարներով.

ա. «Ա» հաճախորդը արտասովոր պայմաններով կամ տվյալ գործարար միջավայրին ոչ բնորոշ ապահովագրական պայմանագիր է կնքում «Բ» ապահովագրական ընկերության հետ՝ կատարելով ապահովագրավճարներ: Ընդ որում, պայմանագրում որպես շահառու կարող է նշվել ինչպես ապահովադիրը, այնպես էլ այլ (հաճախ ապահովադրի հետ փոխկապվածություն չունեցող) անձ: Այնուհետև «Ա» անձը, միայնակ կամ «Գ» միջնորդ կազմակերպության հետ համաձայնության գալով, կեղծում է համապատասխան փաստաթղթերն ապահովագրական դեպք ցույց տալու և փոխհատուցում ստանալու նպատակով: Դրանով «Ա» հաճախորդը միայնակ կամ «Գ» միջնորդ կազմակերպության հանցակցությամբ կատարված կեղծիքի միջոցով ստանում է հանցավոր եկամուտներ, որոնք որպես ապահովագրական ընկերությունից ստացված փոխհատուցում՝ կարող է որպես օրինական ծագմամբ գումար անխոչընդոտ շրջանառել տարբեր ոլորտներում:


[4] Տիպաբանությունը մշակվել է՝ հիմք ընդունելով ՖԱԹՖ-ի կողմից 1995-1996թթ. և 2003-2004թթ. հրապարակված համապատասխան փաստաթղթերը www.fatf-gafi.org:

- Գործառնությունների սխեմատիկ նկարագիրը



բ. «Ա» հաճախորդը «Բ» ապահովագրական ընկերության հետ կնքում է ապահովագրական պայմանագիր, որտեղ որպես ապահովագրավճարներ կատարող կողմ նշվում է երրորդ՝ հաճախ փոխկապվածություն չունեցող անձ: Այնուհետև պայմանագրում նշված թույլատրելի ժամկետի շրջանակներում պայմանագիրը չեղյալ հայտարարելու և գումարը ետ վերադարձնելու պահանջ է ներկայացնում ապահովագրական ընկերությանը: Նշված քայլերի հաջորդականությամբ իրականացվող գործարքներն ապահովագրավճարներ կատարողի կողմից հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն ապահովագրական ընկերության ներգրավմամբ օրինականացնելու և ապահովադրին փոխանցելու նպատակ են հետապնդում:

- Գործառնությունների սխեմատիկ նկարագիրը



3) Եզրահանգում

Ներկայացված սխեմաներով և քայլերի հաջորդականությամբ կատարվող գործարքներն իրենց մեջ պարունակում են հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների ծագման աղբյուրները, դրանց շարժը կամ իրական պատկանելությունը (վերջնական շահառուներին) թաքցնելու նպատակ:

ա. Սահմանված սխեման բնութագրող չափանիշներն են՝

1) ապահովագրավճարների ակնհայտ անհամապատասխանություն ապահովադրի գործարար բնութագրին և եկամուտներին,

2) ապահովագրավճարների մուծում երրորդ (հաճախ փոխկապվածություն չունեցող) անձի կողմից,

3) ապահովադրի և շահառուի ֆորմալ փոխկապվածության բացակայություն,

4) ապահովագրական դեպքի վաղաժամկետ և կասկածելի հանգամանքներով ի հայտ գալը,

5)ապահովագրական պայմանագրի վաղաժամկետ դադարեցում և ապահովագրավճարների ետ ստացում:

բ. Սահմանված սխեմայով հատկորոշվող գործարքներին առնչվող ՓԼ/ԱՖ ռիսկերը կանխարգելելու նպատակով անհրաժեշտ է ձեռնարկել հետևյալ միջոցառումները՝

1) հաճախորդի հավելյալ ուսումնասիրություն,

2) պայմանագրի հիմք հանդիսացող փաստաթղթերի հավելյալ ուսումնասիրություն,

3) ապահովագրական պատահարի տեղի ունենալու հանգամանքների մանրամասն ուսումնասիրություն, հավելյալ փաստաթղթերի պահանջի ներկայացում,

4) ապահովագրական պայմանագրերի վաղաժամկետ դադարեցման դեպքերի մանրամասն ուսումնասիրություն, իրական պատճառների բացահայտում,

5) տեղեկատվության արդյունավետ փոխանակում գործընկերների, իրավասու պետական մարմինների և այլ կազմակերպությունների հետ:

Տիպաբանություն թիվ 10

Մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման հետ կապված առևտրային գործառնությունների միջոցով փողերի լվացման

Գլուխ 1. Կիրառելիության շրջանակը

1. Սույն տիպաբանությամբ ներկայացվող փողերի լվացման սխեմաները կարող են վերաբերել հաշվետվություն տրամադրող հետևյալ անձանց՝

1) բանկեր.

2) փաստաբաններ, ինչպես նաև իրավաբանական ծառայություններ մատուցող անհատ ձեռնարկատերեր և իրավաբանական անձինք.

3) անհատ ձեռնարկատեր հաշվապահներ և հաշվապահական գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք.

4) անհատ ձեռնարկատեր աուդիտորներ և աուդիտորական գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք:

Գլուխ 2. Ընդհանուր դրույթներ

2. Սույն տիպաբանության նպատակն է Հայաստանի Հանրապետության սահմանով ապրանքների տեղափոխման հետ կապված առևտրային գործառնություններում տնտեսվարող սուբյեկտների կողմից ապրանքների սահմանային անցմանն առնչվող փաստաթղթերի խեղաթյուրման հիմքում ընկած շարժառիթների բացահայտումը և այդ շարժառիթներից բխող փողերի լվացման հնարավոր սխեմաների հատկորոշումը: Վերջինս, իր հերթին, ուղղված է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված հաշվետվություն տրամադրող անձանց կողմից գործարքի կամ գործարար հարաբերության կասկածելի որակմանը ու դրա վերաբերյալ Լիազոր մարմնին հաշվետվության տրամադրելու պարտականության պատշաճ կատարմանը օժանդակելուն:

3. Սույն տիպաբանությունում ներկայացված՝ փողերի լվացման հնարավոր սխեմաների, դրանց կիրառության տարբեր դեպքերի նկարագրությունը սպառիչ չէ և սահմանում է առևտրային հարաբերություններում փողերի լվացման տիպային ռիսկերի օրինակելի շրջանակ՝ հաշվետվություն տրամադրող անձանց ընդհանուր պատկերացում տալու, նրանց ներքին դիտարկումների գործառույթը այդ ու նմանատիպ ռիսկերի կանխարգելմանն ուղղորդելու համար:

4. Ապրանքները մաքսային սահմանով տեղափոխելու հետ կապված փողերի լվացման ռիսկերի կանխարգելմանը հաշվետվություն տրամադրող անձինք պետք է հատկապես ուշադրություն դարձնեն Օրենքի 16-րդ հոդվածով սահմանված՝ գործարար հարաբերություններում հաճախորդի անընդհատ ուսումնասիրության պարտականությունն իրականացնելիս: Նշված պարտականությունը ներառում է հաճախորդի հետ գործարքների մոնիտորինգը՝ հաճախորդի, նրա գործարար բնութագրի և ռիսկայնության վերաբերյալ առկա տեղեկատվության, իսկ անհրաժեշտության դեպքում՝ եկամուտների աղբյուրի իսկության հարցում հավաստիանալու նպատակով: Այս հանգամանքը հաշվի առնելով, հաշվետվություն տրամադրող անձինք պետք է ներմուծման կամ արտահանման գործառնություններում ներգրավված հաճախորդների գործարքների մոնիտորինգի ընթացքում հաշվի առնեն այդ գործարքներին առնչվող յուրահատուկ ռիսկերը, հաճախորդներից անհրաժեշտ տեղեկատվություն կամ փաստաթղթեր ձեռք բերելու և ուսումնասիրելու միջոցով հասկանան իրականացվող գործարքների էությունն ու գնահատեն դրանց իրավաչափությունը՝ հարկ եղած դեպքում կատարելով հաճախորդների հավելյալ ուսումնասիրություն և, ըստ անհրաժեշտության, Լիազոր Մարմնին ներկայացնեն կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն:

Գլուխ 3. Հիմնական հասկացություններ և հղումներ

5. Սույն փաստաթղթում կիրառված՝ Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքով և այլ օրենքներով սահմանվող հիմնական հասկացությունները.

1) Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) մաքսային տարածք. ընդգրկում է ՀՀ ցամաքային, ջրային և օդային տարածքը: ՀՀ տարածքում կարող են լինել ազատ մաքսային պահեստներ և ազատ տնտեսական գոտիներ, որոնց տարածքները համարվում են ՀՀ մաքսային տարածքից դուրս գտնվող տարածքներ:

2) Մաքսային արժեք. մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքի մաքսային արժեք գործարքի գինն է, այսինքն՝ այն գումարը, որը փաստացի վճարվել է, ենթակա է վճարման կամ պետք է վճարվեր ապրանքը ներմուծման երկիր արտահանելու նպատակով ձեռք բերելու և մինչև Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանը տեղափոխելու համար: ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը որոշվում է հայտարարատուի կողմից, բացառությամբ ՀՀ մաքսային օրենսգրքով նախատեսված այն դեպքերի, երբ դա որոշվում է մաքսային մարմինների կողմից:

3) Մաքսային վճարներ. ՀՀ մաքսային սահմանով ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման համար մաքսային մարմինների կողմից գանձվող՝ օրենքով սահմանված վճարները, այդ թվում՝

ա. մաքսատուրքեր,

բ. մաքսավճարներ,

գ. մաքսային մարմինների կողմից գանձվող՝ օրենքով սահմանված հարկեր, տուրքեր և այլ պարտադիր վճարներ:

4) Մաքսատուրքեր. ՀՀ մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման համար մաքսային օրենսգրքով սահմանված կարգով և չափով պետական բյուջե գանձվող պարտադիր վճարներ են: Մաքսատուրքերը և դրանց դրույքաչափերը սահմանվում են մաքսային օրենսգրքով: Ըստ գործառնության բնույթի՝ ՀՀ-ում կիրառվում են հետևյալ մաքսատուրքերը՝

ա. արտահանման՝ արտահանվող ապրանքների համար.

բ. ներմուծման՝ ներմուծվող ապրանքների համար.

գ. սեզոնային՝ տարվա որոշակի ժամանակահատվածում առանձին ապրանքներ ՀՀ մաքսային տարածքից արտահանելու կամ այդ տարածք ներմուծելու համար:

Մաքսատուրքի դրույքաչափը կարող է լինել 0 կամ 10 տոկոս[5]՝ ըստ ՀՀ մաքսային օրենսգրքի 102-րդ հոդվածով սահմանված ցանկի:

5) Մաքսավճարներ. ՀՀ մաքսային օրենսգրքով սահմանված կարգով և չափով գանձվող, պետական բյուջեում հաշվառվող պարտադիր վճար է, որն օգտագործվում է մաքսային գործի զարգացման և մաքսային մարմինների նյութատեխնիկական և սոցիալական բազայի ապահովման նպատակով:

Մաքսավճարի դրույքաչափը սահմանվում է մաքսային ձևակերպումների համար՝ 3.500 ՀՀ դրամ, մաքսային ուղեկցման համար՝ 10.000 ՀՀ դրամ (յուրաքանչյուր 100 կմ. համար), տրամադրվող յուրաքանչյուր փաստաթղթի համար՝ 1.000 ՀՀ դրամ:

6) Մաքսային մարմինների կողմից գանձվող՝ օրենքով սահմանված հարկեր, տուրքեր և այլ պարտադիր վճարներ. սրանց թվին են պատկանում ավելացված արժեքի հարկը (այսուհետ՝ ԱԱՀ), ակցիզային հարկը, բնապահպանական, ճանապարհների օգտագործման և այլ վճարները: Սույն տիպաբանության

[5] Ընդ որում, 2003 թվականին Առևտրի համաշխարհային կազմակերպությանը Հայաստանի միացման պայմանագրով նախատեսվում է, որ երկրի կողմից կարող են սահմանվել և կիրառվել նաև այլ դրույքաչափեր: Ներկա պահին ՀՀ կառավարությունը նման որոշում դեռևս չի կայացրել (ինչը, ըստ էության, 0-ից կամ 10-ից տարբեր այլ դրույքաչափի կիրառության իմաստով կհանդիսանար նախադեպ), սակայն չի բացառվում, որ տեղական արտադրողներին պաշտպանելու նպատակով կարող է ներմուծման վրա երբևէ կիրառվել ավելի բարձր (մինչև 15 տոկոս) դրույքաչափ:

նպատակներով դիտարկվում է միայն ԱԱՀ-ն՝ աննուղղակի հարկ, որը վճարվում է ապրանքների ներմուծման, ՀՀ տարածքում դրանց արտադրության ու շրջանառության, ինչպես նաև ծառայությունների մատուցման բոլոր փուլերում:

6. «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն, *«ներմուծում ազատ շրջանառության համար»* մաքսային ռեժիմով ապրանքների ներմուծումը համարվում է ԱԱՀ-ով հարկվող գործարքի տեսակ, որի դեպքում հարկի հաշվարկումն ու գանձումը կատարվում է մաքսային մարմինների կողմից ՀՀ մաքսային սահմանին: Նույն օրենքի 16-րդ հոդվածի համաձայն, ՀՀ մաքսային սահմանից դուրս *«արտահանում ազատ շրջանառության համար»* մաքսային ռեժիմով ապրանքների արտահանումը դասվում է գործարքների այնպիսի տեսակների թվին, որոնց դեպքում արտահանվող ապրանքների հարկվող շրջանառության նկատմամբ կիրառվում է ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափ:

7. Ներմուծման ժամանակ ՀՀ մաքսային սահմանին ԱԱՀ-ի կիրառման առումով առկա են որոշակի առանձնահատկություններ և բացառություններ, մասնավորապես.

1) Սահմանին ԱԱՀ չի հաշվարկվում և չի գանձվում այն ապրանքների դեպքում, որոնց.

ա. ներմուծման համար մաքսատուրքի դրույքաչափը ՀՀ մաքսային օրենսգրքով սահմանված է 0 տոկոս, և որոնք ենթակա չեն ակցիզային հարկով հարկման. այդպիսի ապրանքների ցանկը սահմանված է առանձին օրենքով[6],

բ. մատակարարումը ազատված է ԱԱՀ-ից՝ համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 28-րդ կետի (միջպետական, կրոնական, հասարակական, այդ թվում՝ բարեգործական կազմակերպությունների կողմից ապրանքների մատակարարում մարդասիրական կամ բարեգործական ծրագրերի ներքո):

2) «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6^1 հոդվածով սահմանվում է, որ որոշակի ապրանքատեսակների ներմուծման դեպքում (որոնց ԱՏԳ ԱԱ կոդերը նշված են այդ նույն հոդվածում) դրանց գծով հաշվարկված ԱԱՀ-ի գումարների վճարման ժամկետը հետաձգվում է. ա) մինչև 70 միլիոն ՀՀ դրամ մաքսային արժեքով ապրանքների համար՝ հայտարարագրման օրվանից 1 տարի ժամկետով, բ) 70 միլիոն ՀՀ դրամ և ավելի մաքսային արժեքով ապրանքների համար՝ հայտարարագրման օրվանից 2 տարի ժամկետով, և գ) 300 միլիոն ՀՀ դրամ և ավելի մաքսային արժեքով ապրանքների համար՝ հայտարարագրման օրվանից 3 տարի ժամկետով: Նույն հոդվածով սահմանվում է նաև, որ ՀՀ կառավարության որոշմամբ ընտրված կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներդրումային ծրագրերի շրջանակներում 300 միլիոն ՀՀ դրամը գերազանցող՝ այդ հոդվածում նշված ապրանքներից բացի այլ ապրանքների ներմուծման դեպքում հաշվարկված ԱԱՀ-ի գումարների վճարման ժամկետը կարող է հետաձգվել երեք տարի ժամկետով:

8. Արտահանման ժամանակ ՀՀ մաքսային սահմանին ԱԱՀ-ի կիրառման առումով առկա են որոշակի առանձնահատկություններ, մասնավորապես.

1) «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝ ապրանքների արտահանման գործարքների գծով Հայաստանում ավելացված արժեքի հարկ չի հաշվարկվում և չի գանձվում, այլ կերպ ասած՝ կիրառվում է ԱԱՀ զրոյական դրույքաչափ[7]:

2) Նույն հոդվածի համաձայն՝ ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների իրականացման դեպքում ԱԱՀ վճարողների մոտ դրանց հետ կապված ձեռք բերված ապրանքների և մատուցված ծառայությունների գծով մատակարարների

---

[6] Օրենքի անվանումը հետևյալն է՝ «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ մաքսատուրքի զրո տոկոս դրույքաչափ ունեցող և ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնցից ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից չի հաշվարկվում և գանձվում» (ընդունվել է 2001 թվականի հունիսի 29-ին, ՀՕ-195):

[7] Ընդ որում, ՀՀ մաքսային օրենսգրքով արտահանվող ապրանքների վրա մաքսատուրքի դրույքաչափը ևս սահմանված է զրո տոկոս:

կողմից ներկայացված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները ենթակա են վերադարձման (հաշվանցման):

9. ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափի հետ չկապված գործարքների գծով, նույն օրենքի 25-րդ հոդվածի առաջին պարբերության համաձայն՝ հաշվետու ժամանակաշրջանում հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարները հարկվող շրջանառության նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարներին գերազանցելու դեպքում գերազանցող մասը հաշվանցվում է հետագա ժամանակաշրջաններում ԱԱՀ-ի հաշվարկներով բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարների հաշվին. սրանից բացառություն են կազմում ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքները[8], որոնց իրականացման դեպքում ձեռքբերումների գծով մատակարարների հարկային հաշիվներում և ապրանքների ներմուծման մաքսային հայտարարագրերում առանձնացված ԱԱՀ-ի գումարը հարկ վճարողի գրավոր դիմումի հիման վրա կարող է.

1) Հաշվանցվել հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների հաշվին, և (կամ),

2) Պետական բյուջե հաշվեգրվող հարկային պարտավորությունների բացակայության պայմաններում վերադարձվել կամ հաշվանցվել հարկ վճարողի այլ պարտավորությունների դիմաց, եթե հարկ վճարողն ունի ԱԱՀ-ի դեբետային մնացորդ: Այս դեպքում հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա է ԱԱՀ-ի դեբետային մնացորդի (առանց գերավճարի և հարկի չհաշվանցվող մնացորդների գումարների) այն մասը, որը չի գերազանցում հաշվետու ժամանակաշրջանում ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների հարկվող շրջանառության 20 տոկոսը:

10. ՀՀ մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման համար ՀՀ մաքսային օրենսգրքի 22-րդ հոդվածով սահմանվում են **հետևյալ մաքսային ռեժիմները.**

1) ներմուծում ազատ շրջանառության համար,
2) վերաներմուծում,
3) տարանցիկ փոխադրում,
4) ներմուծում մաքսային պահեստ,
5) ներմուծում անմաքս առևտրի խանութ,
6) ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար,
7) ժամանակավոր ներմուծում,
8) ժամանակավոր արտահանում,
9) ներմուծում ազատ մաքսային պահեստ,
10) ժամանակավոր արտահանում՝ վերամշակման համար,
11) արտահանում ազատ շրջանառության համար,
12) վերաարտահանում,
13) սեփականության իրավունքից հրաժարում՝ հօգուտ պետության,
14) ոչնչացում,
15) ներմուծում ազատ տնտեսական գոտի:

Գլուխ 4. Փողերի լվացման հնարավոր սխեմաների նկարագրություններ

11. ՀՀ մաքսային սահմանով ապրանքների տեղափոխմանն առնչվող՝ փողերի լվացման հետ կապված հնարավոր գործառնությունների բացահայտման նպատակով այդ տեղաշարժն անհրաժեշտ է դիտարկել ներմուծողների և արտահանողների տեսանկյունից:

12. Ներմուծման գործառնությունների դեպքում փողերի լվացման հնարավոր ռիսկերի բնորոշումը

[8] Բացառությամբ սև և գունավոր մետաղների ջարդոնի արտահանման գործարքների:

1) ՀՀ մաքսային սահմանով ապրանքների թերևս ամենատարածված՝ «ներմուծում ազատ շրջանառության համար» ռեժիմով տեղափոխման գործընթացի նկարագրությունը հետևյալն է.

Դիցուք ՀՀ ռեզիդենտ կազմակերպությունն արտերկրից ներմուծում է ապրանքներ, որոնց ձեռքբերման արժեքը կազմում է 85 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, մինչև ՀՀ մաքսային սահման հասցնելու հետ կապված ծախսերը (ապահովագրություն, տրանսպորտ և այլն)՝ 15 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: Դիտարկվող օրինակի նպատակներից ելնելով՝ ենթադրվում է, որ ներմուծված ապրանքների նկատմամբ կիրառվում է ՀՀ մաքսային օրենսգրքով սահմանված՝ ներմուծման մաքսատուրքի որոշակի (10 տոկոս) դրույքաչափ: Ապրանքների մաքսազերծման նպատակով, մաքսավճարների հաշվարկումից և գանձումից զատ, կատարվում են հետևյալ հաշվարկները.

ա. Հաշվարկվում է ապրանքների մաքսային արժեքը, որը հավասար է դրանք մինչև ՀՀ մաքսային սահմանը հասցնելու հետ կապված բոլոր ծախսերի հանրագումարին՝ դիտարկվող դեպքում 100 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ,

բ. Ըստ ՀՀ մաքսային օրենսգրքի 102-րդ հոդվածով սահմանված ցանկի դրույքաչափի հաշվարկվում է մաքսատուրք, որը հավասար է մաքսային արժեքի 10 տոկոսին՝ դիտարկվող դեպքում 10 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ,

գ. Հաշվարկվում է ԱԱՀ, որը հավասար է մաքսային արժեքի և մաքսատուրքի հանրագումարի (100+10=110) 20 տոկոսին՝ դիտարկվող դեպքում 22 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:

2) Հնարավորինս ճշգրիտ լինելու համար կարող ենք նաև հաշվի առնել ապրանքներն ընդհուպ մինչև ներմուծողի տարածք հասցնելու ծախսերը[9]՝ դիցուք 5 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: Այսպիսով, դիտարկվող օրինակում ապրանքների ինքնարժեքը կազմում է 115 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ (100+10+5), իսկ պետբյուջեի նկատմամբ ձևավորված դեբիտորական պարտավորությունը՝ 22 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ ԱԱՀ-ի գծով:

3) Ենթադրենք նաև, որ ներմուծողը նպատակ ունի ներմուծված ապրանքների վաճառքից ստանալ առնվազն 30 տոկոս շահույթ, այսինքն՝ պետք է ապրանքները վաճառքի հանի առնվազն 150 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամով ([150-115]/115=30): Այդ նպատակով, ապրանքների մանրածախ գինը սահմանվում է 180 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, որի 16.67 տոկոսը՝ 30 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, ենթակա է պետբյուջեի օգտին հաշվեգրման որպես ներմուծումից հետո՝ արդեն ՀՀ տարածքում ապրանքների վաճառքի փուլում ձևավորված ԱԱՀ-ի գումար: Հաշվի առնելով, որ ներմուծողի կողմից ԱԱՀ-ի գծով արդեն իսկ հաշվեգրվել ու կատարվել է վճարում՝ 22 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի չափով, վաճառքից հետո պետբյուջե փոխանցման ենթակա է մնում ընդհանուր առմամբ 8 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:

4) Սույն կետի 1-3-րդ ենթակետերով սահմանված գործողությունների շղթայում ներմուծմամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտների մոտ պետությանը վճարվող մաքսատուրքերի և հարկերի արհեստական նվազեցման միջոցով առավելագույն շահույթ ստանալու նպատակից ելնելով՝ կարող են առաջանալ ներմուծմանն առնչվող փաստաթղթերի խեղաթյուրման միջոցով ապրանքների մաքսային արժեքի **արհեստական նվազեցման** շարժառիթներ: Ներմուծման շղթայի՝ նման շարժառիթներ ձևավորող գործոնների թվին են պատկանում ներմուծվող ապրանքների նկատմամբ.

ա. Հաշվարկվող մաքսատուրքի դրույքաչափը, որը կարող է լինել 0 կամ 10 տոկոս՝ կախված ապրանքների տեսակից (ըստ ՀՀ մաքսային օրենսգրքի 102-րդ հոդվածով սահմանված ցանկի),

[9] Հայաստանի Հանրապետությունում հաշվապահական հաշվառումը վարվում է ՀՀ դրամով, սակայն պարզության համար սույն օրինակում ինքնարժեքի և այլ հաշվարկները մինչև օրինակի ավարտը ներկայացվում են ԱՄՆ դոլարով:

բ. ԱԱՀ-ի կիրառելիությունը, քանի որ ապրանքները ԱԱՀ-ով կարող են հարկվել կամ չհարկվել՝ կախված «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված բացառությունների պայմաններին համապատասխանելուց:

5) Օրինակ, տնտեսվարող սուբյեկտը, որը զբաղվում է 10 տոկոս դրույքաչափով մաքսատուրքի հաշվարկման ենթակա և (կամ) ԱԱՀ-ից չազատված ապրանքների ներմուծմամբ, կարող է դրսևորել անբարեխիղճ վարքագիծ՝ արհեստականորեն նվազեցնելով ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը (մասնավորապես՝ դրանց ձեռքբերման արժեքը հիմնավորող խեղաթյուրված փաստաթղթեր ներկայացնելու միջոցով), ինչն իր հերթին կհանգեցնի ներմուծվող ապրանքների համար հաշվարկվող մաքսային վճարների գումարի նվազեցմանը:

6) Համանման պայմաններում, ներմուծողի մոտ կարող են առաջանալ նաև մաքսային արժեքի **արհեստական ավելացման** շարժառիթներ: Օրինակ՝ տնտեսվարող սուբյեկտը, որը զբաղվում է 0 տոկոս դրույքաչափով մաքսատուրքի հաշվարկման ենթակա և (կամ) ԱԱՀ-ից ազատված ապրանքների ներմուծմամբ, կարող է արհեստականորեն ավելացնել ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը՝ հետագայում դրանց իրացումից ստացված շահույթի հայտարարագրվող չափը նվազագույնի հասցնելու և քիչ շահութահարկ (անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ եկամտահարկ) վճարելու նպատակով:

7) Ընդ որում, այս դեպքում պետք է հաշվի առնել որոշակի նրբություններ. օրինակ՝ հնարավոր է, որ ներմուծողը չի հանդիսանում շահութահարկ վճարող, քանի որ գտնվում է այսպես կոչված հարկային արձակուրդում, կամ հանդիսանում է հաստատագրված հարկ վճարող, կամ ունի մեծ կուտակված հարկային վնասներ, որոնք իրավունք ունի տեղափոխել հինգ տարի առաջ, այսինքն՝ նրան չի անհանգստացնում ներմուծման գործարքով մեծ շահութաբերություն առաջանելու հանգամանքը:

8) Նմանապես, պետք է հաշվի առնել, որ ի լրումն ՀՀ մաքսային օրենսգրքի 87-րդ հոդվածով սահմանված գործարքի գնի մեթոդի (երբ ապրանքի մաքսային արժեքը որոշելու համար հիմք է ընդունվում դրանց ձեռքբերման վերաբերյալ ներմուծողի կողմից ներկայացված փաստաթուղթը), մաքսային մարմիններն իրավասու են կիրառել նաև օրենսգրքի 88-93-րդ հոդվածներով սահմանված ևս հինգ մեթոդներից ցանկացածը[10]: Արդյունքում կստացվի, որ եթե խոսք չի գնում գործարքի գնի մեթոդի մասին, ապա տվյալ գործարքի շրջանակներում շահութահարկի վրա ուղղակի ազդեցությունը թերևս բացակայում է, քանի որ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ հիմք են ընդունվելու սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերը, այլ ոչ թե մաքսային հայտարարագրման ժամանակ որոշված և կիրառված մաքսային արժեքի մեծությունը:

9) Բացի այդ, ներմուծման դեպքում ապրանքների մաքսային գնի խեղաթյուրումը կարող է նաև պայմանավորված լինել ոչ թե կամ ոչ միայն վճարվող մաքսատուրքերի կամ հարկերի արհեստական նվազեցման միջոցով առավելագույն շահույթ ստանալու, այլև՝ որոշակի ՀՀ դրամական հոսքերի փաստաթղթային հիմնավորում ապահովելու նպատակով: Օրինակ՝ ներմուծողը, որը խնդիր ունի ՀՀ տարածքից օրինական ճանապարհով դուրս բերել որոշակի գումար, կարող է գնալ «զոհողության»՝ ապրանքների ձեռքբերման արժեքը բարձր ցույց տալու արդյունքում վճարելով ավելի շատ հարկեր (տուրքեր), բայց արդյունքում նաև իր արտասահմանյան կոնտրագենտ-մատակարարներին կատարելով ապրանքների ձեռքբերման իրական արժեքը գերազանցող գումարով փոխանցումներ՝ հետագայում դրանք ինչ-ինչ սխեմաներով տնօրինելու նպատակով (այս տարբերակի կիրառությունն

[10] Նշված մեթոդներն են մաքսային արժեքի որոշումն ըստ. 1) նույն ապրանքների գործարքի գնի, 2) համանման ապրանքների գործարքի գնի, 3) ՀՀ ներքին շուկայում ապրանքի միավորի իրացման գնի, 4) հաշվարկային արժեքի և 5) պահուստային մեթոդի:

ավելի հավանական է օֆշորային երկրներում կամ տարածքներում գրանցված և (կամ) սպասարկվող կոնտրագենտ-մատակարարների դեպքում):

10) Մեկ այլ տարածված սխեմա է այն դեպքը, երբ ներմուծվող ապրանքը սարքավորում է, որի գնի կառուցվածքում կարող են ներառված լինել կամ չլինել մոնտաժային աշխատանքները և (կամ) սարքավորման աշխատանքի համար անհրաժեշտ մտավոր սեփականության օբյեկտը կամ օգտագործման իրավունքները: Քանի որ աշխատանքները, ծառայությունները կամ մտավոր սեփականության իրավունքները սահմանով տեղափոխվող առանձին ապրանք չեն, ապա հնարավոր է, որ այդ բաղադրիչների միջոցով էլ փորձ արվի ազդել ներմուծվող ապրանքի մաքսային արժեքի վրա: Սրա տիպիկ օրինակ կարող է լինել ներմուծված սարքավորման գործարկման համար անհրաժեշտ ծրագրային ապահովման՝ արտերկրից առանձին ներմուծումը կապի ժամանակակից միջոցներով, սարքավորման մոնտաժման աշխատանքների կամ դրանց գծով խորհրդատվական կամ տվյալների մշակման ծառայությունների հետագա առանձին ձեռքբերումը անիրական բարձր գներով կամ գործարար շրջանակի սովորույթների համար ոչ բնորոշ պայմաններով:

13. Արտահանման գործառնությունների դեպքում փողերի լվացման հնարավոր ռիսկերի բնորոշումը

1) ՀՀ մաքսային սահմանով ապրանքների թերևս ամենատարածված՝ «արտահանում ազատ շրջանառության համար» ռեժիմով տեղափոխման գործընթացի նկարագրությունը հետևյալն է.

Դիցուք ՀՀ ռեզիդենտ կազմակերպությունը զբաղվում է ապրանքների արտադրությամբ և արտահանմամբ: Ընդ որում արտահանման համար նախանշված միավոր վաճառքի գնի կառուցվածքը ներառում է 60.000 ՀՀ դրամի չափով նյութական ծախսեր, 15.000 ՀՀ դրամի չափով աշխատավարձ ու սոցիալական վճարներ և 25.000 ՀՀ դրամի չափով ակնկալվող շահույթ, այսինքն՝ միավոր վաճառքի նախանշված գինը կազմում է 100.000 ՀՀ դրամ: «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի համաձայն՝ արտահանողին ենթակա է վերադարձման այդ գնի մեջ նյութական ծախսերի մասով ներառված ԱԱՀ-ի գումարը, որի գումարը չի կարող գերազանցել արտահանման գնի 20 տոկոսը: Վերադարձման ենթակա գումարը նույն օրենքի 9-րդ հոդվածի համաձայն որոշվում է 16.67 տոկոս հաշվարկային դրույքաչափով, այսինքն դիտարկվող դեպքում վերադարձման ենթակա գումարի առավելագույն չափը կազմում է շուրջ 16.670 ՀՀ դրամ, իսկ կոնկրետ չափը (որը սովորաբար հաստատվում է հարկային մարմինների կողմից ուսումնասիրության արդյունքում)՝ 60.000 * 20% = 12.000 ՀՀ դրամ:

2) Գործառնությունների այս շղթայում արտահանմամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտների մոտ պետությունից ստանալիք ԱԱՀ-ի փոխհատուցման գումարն առավելագույնի հասցնելու նպատակից ելնելով՝ կարող են առաջանալ արտահանմանն առնչվող փաստաթղթերի խեղաթյուրման միջոցով ապրանքների արտահանման գնի **արհեստական ավելացման** շարժառիթներ: Արտահանման շղթայի՝ նման շարժառիթներ ձևավորող գործոնների թվին են պատկանում արտահանվող ապրանքների նկատմամբ.

ա. Տվյալ ապրանքատեսակի՝ ԱԱՀ-ից ազատված լինելու հանգամանքը, ըստ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածով սահմանված ցանկի[11],

բ. Արտահանողի՝ հարկման յուրաքանչյուր ռեժիմից օգտվելու հանգամանքը,

գ. Ապրանքների ներմուծման երկրի հետ Հայաստանի Հանրապետության ազատ առևտրի պայմանագիր ունենալու հանգամանքը:

[11] Օրինակ՝ ԱԱՀ-ից ազատված են թերթերի և ամսագրերի, պրոտեզաօրթոպեդիկ պարագաների, ՀՀ կառավարության կողմից սահմանված ցանկում նշված թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի իրացումը:

3) Օրինակ, տնտեսվարող սուբյեկտը, որն օգտվում է շահութահարկի արտոնությունից («Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ գլխի համաձայն) և զբաղվում է 20 տոկոս ԱԱՀ-ով հարկվող ապրանքների արտահանմամբ, կարող է դրսևորել անբարեխիղճ վարքագիծ՝ արհեստականորեն ավելացնելով արտահանվող ապրանքների գինը (մասնավորապես՝ դրանց գնագոյացումը հիմնավորող խեղաթյուրված փաստաթղթեր ներկայացնելու միջոցով), ինչն իր հերթին կհանգեցնի ապրանքների արտահանման արդյունքում ՀՀ պետբյուջեից ստացման ենթակա ԱԱՀ-ի հնարավոր փոխհատուցման գումարի ավելացմանը: Նույն տրամաբանությունը գործում է նաև ապրանքների գնափոխանցման (transfer pricing) նպատակ հետապնդող գործառնությունների դեպքում:

4) Այս դեպքում նույնպես պետք է հաշվի առնել որոշակի նրբություններ. օրինակ՝ հնարավոր է, որ արտահանողը չի հանդիսանում շահութահարկ վճարող, քանի որ գտնվում է հարկային արձակուրդում, կամ ունի մեծ կուտակված հարկային վնասներ, որոնք իրավունք ունի տեղափոխել հինգ տարի առաջ, այսինքն՝ նրան չի անհանգստացնում արտահանման գործարքով մեծ շահութաբերություն առաջանելու հանգամանքը:

5) Բացի այդ, ինչպես ներմուծման գործառնությունների դեպքում, հնարավոր է, որ արտահանման գնի խեղաթյուրումը պայմանավորված լինի ոչ թե կամ ոչ միայն այդ գնի արհեստական բարձրացման միջոցով ԱԱՀ-ի ավելի մեծ չափով փոխհատուցում ստանալու, այլև՝ որոշակի ՀՀ դրամական հոսքերի փաստաթղթային հիմնավորում ապահովելու նպատակով: Օրինակ՝ արտահանողը, որը խնդիր ունի ՀՀ տարածք օրինական ճանապարհով բերել որոշակի հանցավոր գումար, կարող է գնալ «զոհողության»՝ ապրանքների արտահանման արժեքը բարձր ցույց տալու արդյունքում վճարելով ավելի շատ հարկեր/ տուրքեր, բայց արդյունքում նաև իր արտասահմանյան կոնտրագենտ-շահառուներից ստանալով ապրանքների վաճառքի իրական արժեքը գերազանցող գումարով փոխանցումներ՝ հետագայում դրանք ինչ-ինչ սխեմաներով տնօրինելու նպատակով (այս տարբերակի կիրառությունն ավելի հավանական է օֆշորային երկրներում կամ տարածքներում գրանցված և (կամ) սպասարկվող կոնտրագենտ-գնորդների դեպքում):

6) Սույն կետի 1-5-րդ ենթակետերով նկարագրված սխեմաների մասնավոր դեպք են հանդիսանում **անապրանք գործարքները** (այսպես կոչված՝ ԱԱՀ-ի «կառուսելի» սխեմաները), երբ անբարեխիղճ անձինք խեղաթյուրված փաստաթղթերի հիման վրա փորձում են իրականում գոյություն չունեցող ապրանքների կամ ծառայությունների արտահանման դիմաց ստանալ ԱԱՀ-ի փոխհատուցման գումարը:[12]

7) Արտահանմամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտների մոտ կարող են առաջանալ նաև արտահանմանն առնչվող փաստաթղթերի խեղաթյուրման միջոցով ապրանքների արտահանման գնի **արհեստական նվազեցման** շարժառիթներ այն դեպքում, երբ ապրանքների ներմուծման երկրում գործում է հարկման ավելի մեղմ դաշտ, այսինքն՝ արտահանողին ձեռնտու է ՀՀ-ից ապրանքները արտահանել և, արդյունքում, համապատասխան երկիր ներմուծել հնարավորինս ցածր գնով, հաշվի առնելով, որ հետագայում դրանց իրացումից ստացված շահույթը ներմուծման երկրում ավելի քիչ կհարկվի՝ համեմատած դրանց իրական արտահանման գինը ցույց տալու դեպքում ՀՀ-ում վճարման ենթակա հարկերի հետ:

8) Այսինքն, թե ներմուծման, թե արտահանման գործառնություններում փողերի լվացման հնարավոր սխեմաների հայտնաբերման նպատակով անհրաժեշտ է յուրաքանչյուր դեպքում հաշվի առնել տվյալ գործարքի առանձնահատկությունները՝

[12] Ընդհանրապես, անապրանք գործարքների միջոցով փողերի լվացման սխեմաներ կարող են կիրառվել ինչպես ներմուծման, այնպես էլ արտահանման գործառնությունների քողի ներքո, այսինքն՝ երբ երկրից դուրս կամ դեպի երկիր դրամական միջոցների հոսքերի հիմնավորման նպատակով ներկայացվում են գոյություն չունեցող ապրանքների մատակարարման կամ ծառայությունների մատուցման պայմանագրեր:

ներմուծողի/ արտահանողի կողմից անբարեխիղճ վարքագծի դրսևորման կոնկրետ շարժառիթները հայտնաբերելու համար:

14. Վերամշակման նպատակով ժամանակավոր ներմուծման և արտահանման հետ կապված գործառնությունների առանձնահատկությունները

1) Ներմուծման և արտահանման հետ կապված տնտեսական գործունեության շրջանակներում ապրանքների գնի հնարավոր խեղաթյուրման հիմքում ընկած շարժառիթները առանձին-առանձին կամ կոմբինացված տեսքով կարող են առկա լինել նաև վերամշակման նպատակով ժամանակավոր ներմուծման և արտահանման հետ կապված գործառնություններում: Այստեղ պետք է հաշվի առնել, որ 1) «ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմով ներմուծված ապրանքները հետագայում «վերաարտահանում» մաքսային ռեժիմով արտահանելիս, իսկ 2) «ժամանակավոր արտահանում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմով արտահանված ապրանքները հետագայում «վերաներմուծում» մաքսային ռեժիմով ներմուծելիս տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ ՀՀ մաքսային սահմանի վրա հաշվեգրվում և գանձվում են հետևյալ տարբերությունները (երկու դեպքում էլ բացառությամբ մաքսավճարի, որը հաշվարկվում է առանց նվազեցումների).

ա. առաջին դեպքում՝ վերամշակված ապրանքների արտահանման համար «արտահանում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով նախատեսված մաքսային վճարների և վերամշակման նպատակով ներմուծված ապրանքների համար «արտահանում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով հաշվարկվող մաքսային վճարների դրական տարբերությունը,

բ. երկրորդ դեպքում՝ վերամշակված ապրանքների ներմուծման համար «ներմուծում՝ ազատ շրջանառության համար մաքսային ռեժիմով նախատեսված մաքսային վճարների և վերամշակման նպատակով արտահանված ապրանքների համար «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով հաշվարկվող մաքսային վճարների տարբերությունը:

2) Սույն կետի 1-ին ենթակետով սահմանված ռեժիմներով գործառնությունների առանձնահատկությունն այն է, որ եթե, օրինակ, «ներմուծում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ներմուծման դեպքում գնի խեղաթյուրման նպատակին կարելի է հասնել մեկ քայլով (օրինակ՝ խեղաթյուրված փաստաթղթեր ներկայացնելու միջոցով սահմանին հաշվեգրվող ու գանձվող մաքսատուրքերի և հարկերի գումարի նվազեցումը), իսկ ապրանքների/ ծառայությունների և դրանց գնագոյացումը հիմնավորող փաստաթղթերի շարժը կատարվում է մեկ ուղղությամբ (տվյալ դեպքում՝ դեպի Հայաստանի Հանրապետություն), ապա ժամանակավոր ներմուծման և արտահանման հետ կապված գործառնություններում այդ նպատակին հասնելու համար որպես կանոն պահանջվում է ավելի քան մեկ քայլ և գործառնությունների մի շղթա, որի ոչ բոլոր բաղադրիչներն են պարունակում անհիրավաչափ կամ հանցավոր գործողություններ, սակայն դրանց ամբողջությունն ի վերջո ուղղված է այս կամ այն նախորդող հանցանքից ձևավորված միջոցների օրինականացմանը, կամ որ նույնն է՝ փողերի լվացմանը:

Օրինակ, ընկերությունը, որ զբաղվում է արտերկրից կիսապատրաստի արտադրանքի ներկրմամբ, ՀՀ-ում դրա վրա որոշակի աշխատանք կատարելով (ավելացված արժեք ստեղծելով) և վերջնական արտադրանքի արտահանմամբ, կարող է շահագրգռված լինել կիսապատրաստի արտադրանքը ներմուծելիս **արհեստականորեն ավելացնել** դրա արժեքը, իսկ արդեն պատրաստի արտադրանքը վերաարտահանելիս դրա արժեքը ցույց տալ իրական մեծությամբ՝ այսպիսով նվազագույնի հասցնելով ՀՀ-ում ձևավորված ավելացված արժեքը և, հետևաբար, ՀՀ-ում հաշվեգրման ու վճարման ենթակա շահութահարկը: Այս դեպքում ապրանքի արժեքն արհեստականորեն ավելացնելու շարժառիթն այստեղ նույնը չէ, ինչ «ներմուծում ազատ շրջանառության համար» ռեժիմով ապրանքների ներմուծման կամ «արտահանում ազատ շրջանառության համար» ռեժիմով ապրանքների արտահանման դեպքում, և անբարեխիղճ տնտեսվարող սուբյեկտն իր անհիրավաչափ

գործողության վերջնական արդյունքին հասնում է պատրաստի արտադրանքն արտահանելիս՝ ՀՀ-ում ավելացված արժեքը նվազագույնի հասցված լինելու տեսքով:

Գլուխ 5. Եզրակացություններ

15. Փողերի լվացման հնարավոր սխեմաների առկայության վերաբերյալ եզրահանգման գալու նպատակով, հաշվետվություն տրամադրող անձինք պետք է ուշադրություն դարձնեն այդ սխեմաների հայտնաբերման տեսանկյունից էական այնպիսի բնութագրերի, ինչպիսիք են.

1) գործարքի տնտեսագիտական կամ տրամաբանական հիմնավորումը հավաստող փաստաթղթերի (պայմանագրեր, համաձայնագրեր և այլն) բովանդակային ամբողջականությունը և տվյալ ոլորտի գործարար սովորույթներին համապատասխանությունը.

2) գործարքին առնչվող այլ փաստաթղթերի (հաշիվ-ապրանքագրեր, սահմանային անցման, փոխադրման ծախսերի հիմքեր և այլն) արժանահավատությունը.

3) գործարքի հիմնական բնութագրիչների (գին, ժամկետներ, մատակարարման պայմաններ և այլն) համապատասխանությունը շուկայական պայմաններին և ողջամիտ գործելակերպին.

4) հաճախորդի գործարքների համապատասխանությունը նրա գործարար կերպարին, նախկինում հայտարարագրված ու փաստացի իրագործված բիզնես-նպատակներին.

5) հաճախորդի գործառնությունների գումարների, փոխանցման ուղղությունների, պարբերականության և այլ բնութագրիչների համապատասխանությունը գործարքի տնտեսագիտական կամ տրամաբանական հիմնավորումը հավաստող և գործարքին առնչվող փաստաթղթերում արտացոլված հանգամանքներին կամ փաստերին.

6) հաճախորդի գործառնություններում օֆշորային կամ այլ ռիսկային գոտիներում գտնվող ընկերությունների ներգրավվածությունը: